

# ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ


Առաջադրանքների լուծման համար տրվում է **75** րոպե **3-4**-րդ դասարաններ

- Յուրաքանչյուր առաջադրանքի համար տրված պատասխաններից ճիշտ է միայն մեկը:
- Չլուծված առաջադրանքի համար միավորներ չեն գումարվում և չեն հանվում:
- Մրցույթի մասնակիցը կարող է վաստակել առավելագույնը 110 միավոր:
- Մրցույթի ավարտին առաջադրանքների թերթիկը մնում է մասնակցի մոտ:
- Մրցույթի մասնակիցներին ներկայացվող գլխավոր պահանջը առաջադրանքներն ինքնուրույն և ազնվորեն կատարելն է:

## 3 միավոր գնահատվող առաջադրանքներ

1. **Հարդ, խայծ, խուլ, հորդ, հեզ** բառաշարքի **ո՞ր** բառում որևէ կենդանու չհանդիպեցիր:

- Ա. հարդ    Բ. խայծ    Գ. խուլ    Դ. հորդ    Ե. հեզ


2. Պատասխանի տարբերակներից **ո՞ր** բառը պետք է գրել  -ի փոխարեն, որ **զենք**-ը «դառնա» **գարդ**:

զենք - հենք - հանք -  - վարք - վարդ - գարդ

- Ա. հարդ    Բ. հանդ    Գ. քնար    Դ. վագր    Ե. վանք

3. Մեղվիկի վրա դրոշմվել են միևնույն բառի ճիշտ և սխալ գրվածքները: Քանի սը պետք է ջնջի մեղվիկը, որ մնան միայն ճիշտ գրված բառերը:

- Ա. չորսը    Բ. վեցը    Գ. յոթը  
Դ. ութը    Ե. տասնմեկը



4. Ո՞րն է հետևյալ հանելուկի պատասխանը:

*Երկու արև են, երկվորյակ եղբայր,  
Մեկտեղ են տեսնում աշխարհն այս անծայր,  
Թե որ չլիներ մի սար բաժանող,  
Նրանք գուցե և տեսնեին իրար:*

- Ա. ականջներ    Բ. աչքեր    Գ. ատամներ    Դ. հոնքեր    Ե. ձեռքեր


5. Պատասխանի տարբերակներում բերված կենդանիներից **ո՞րն** իր աջն ու ձախը չի տարբերում:


- Ա. ջրշուն    Բ. շնագայլ    Գ. արջամուկ    Դ. ջրարջ    Ե. ընձառյուծ

6. Ի՞նչ բառ է գաղտնագրված նկարելուկով:

- Ա. ցնցում    Բ. անցած    Գ. անցուղի    Դ. անցում    Ե. ցանք




7. **կողոպուտ - պուտուկ**  
**տատմեր - մերակ**  
**պատասխան - **

Պատասխանի տարբերակներում բերված բառերից **ո՞րը** պետք է դնել  -ի փոխարեն:

- Ա. սխալ    Բ. խավար    Գ. խանութ    Դ. աննախադեպ    Ե. անխարդախ

8. Ի՞նչ բառ է գրված նկարելուկով:

- Ա. բազկամարտ    Բ. բազկաթոռ  
Գ. բազկատարած    Դ. ճոճաթոռ    Ե. բազուկ



9. Ի՞նչ բառ կստացվի **ղշերք**-ից, եթե յուրաքանչյուր տառ փոխարինվի այբուբենում նրան նախորդող տառով:

- Ա. գնորդ    Բ. գնդել    Գ. գնդիկ    Դ. գմբեթ    Ե. գնդակ

10. Եթե **հինգհարկանի, յոթտեղանի, վեցմատանի, երեքդռնանի, մեկտողանի, չորսձիանի** բառերից մկրատենք թվերը, պատասխանի տարբերակներում բերվածներից **ո՞րը** կառանձնանա մյուս չորսից:

- Ա. մեկտողանի    Բ. վեցմատանի    Գ. հինգհարկանի  
Դ. յոթտեղանի    Ե. չորսձիանի

## 4 միավոր գնահատվող առաջադրանքներ

11. **Հսկայական փռում թխած**

*Մի գաթա կա՝ սիրուն, զլոր,  
Թխողն ինչքան ծայրից պոկում,  
Նորից է նա դառնում կլոր:*

Ներսես Ծնորհալու այս հանելուկում ի՞նչն է գաթայի անվան տակ թաքնված:

- Ա. արև    Բ. խմոր    Գ. խնձոր    Դ. լուսին    Ե. ջրհոր

12. **Թուղթ, առարկա, փափագ, գանգ, արքա** բառերը, բացի մեկից, ենթարկվում են նույն օրինաչափությանը: Ո՞ր բառը չի ենթարկվում այդ օրինաչափությանը:

- Ա. թուղթ    Բ. առարկա    Գ. փափագ    Դ. գանգ    Ե. արքա


13. **Թութակը մուկ բռնեց ու կերավ:** Այս նախադասության մեջ հետաքրքիր օրինաչափությամբ թաքնվել է մի բառ, որը նշանակում է՝

- Ա. թռչուն    Բ. կրծող    Գ. նվագարան    Դ. դանակ    Ե. փետուր

14. **Ականջները չորս անել** դարձվածքը նշանակում է՝

- Ա. արագ փախչել, հեռանալ  
Բ. մեծ ուշադրությամբ լսել  
Գ. ուշադրություն չդարձնել լսածին  
Դ. մեկի ականջները քաշել  
Ե. գնալ հեռու երկրներ

15. Արքայազնը երկրաչափական պատկերներով գաղտնագիր ուղարկեց պալատ և իր փրկության համար մետաքսե ի՞նչ պահանջեց:



- Ա. ուռենի      Բ. գորգ      Գ. առյուծ  
 Դ. ուռկան      Ե. ճուպան

16. Մեր գյուղում մի հովիվ կա, նա չի վախենում ոչ մի գայլից և հոտը բարձր սարերում է արածեցնում: Ո՞ր գույնն է թաքնվել նախադասության մեջ:

- Ա. նարնջագույն      Բ. դեղին      Գ. սպիտակ      Դ. կանաչ      Ե. կապույտ

17. Երրորդ դասարանում ուսուցչուհին հայտնեց աշակերտների գնահատականները. Տիգրան Տեղյանը ստացել էր 10, Իրինա Իսահակյանը՝ 9, Յուրի Յարայանը՝ 7, Հայկուշ Հակոբյանը՝ 5: Պատասխանի տարբերակների աշակերտներից ո՞վ էր 3 ստացել:

- Ա. Արամ Աբովյան      Բ. Գեղամ Գրիգորյան      Գ. Երանուհի Եսայան  
 Դ. Զարուհի Զաքարյան      Ե. Թագուհի Թումանյան

18. Պատասխանի տարբերակներից որո՞ւմ է ուղտը հնարամտորեն թաքցրել իր կուրը:

- Ա. պատասխան      Բ. նպաստ      Գ. սարքավորում      Դ. պահարան      Ե. կեռիկ

19. Աջ կողմում բերված է տառաթվային ծածկագիր, որում յուրաքանչյուր տառին համապատասխանում է մեկ թվանշան: Նույն տառերին համապատասխանում են նույն թվանշանները: Բերված տարբերակներից ո՞րն է համապատասխանում այդ տառաթվային ծածկագրին:

$$\begin{array}{r} \text{ՄՇՈՒՇ} \\ + \\ \text{ՅՈՒՐՏ} \\ \hline \text{ՉՅՈՒՆ} \end{array}$$

- |             |             |             |             |             |
|-------------|-------------|-------------|-------------|-------------|
| 3617        | 4172        | 4271        | 3271        | 4171        |
| +           | +           | +           | +           | +           |
| <u>3617</u> | <u>4172</u> | <u>4271</u> | <u>3271</u> | <u>5702</u> |
| Ա. 7324     | Բ. 8344     | Գ. 8542     | Դ. 6542     | Ե. 9873     |

20. Ո՞ր բառն է կազմվում **ՏԱՐԱԳՐՈՒՄ** բառի բոլոր տառերով:

- Ա. արատագրում      Բ. մրգատար      Գ. գումարտակ  
 Դ. արտագրում      Ե. ամրագրում

**5 միավոր գնահատվող առաջադրանքներ**

21. **Օտոա, կողմ, ոզնի, որդի, սուրճ, վարդ** բառերը, բացի մեկից, ենթարկվում են նույն հետաքրքիր օրինաչափությանը: Ո՞ր բառը չի ենթարկվում այդ օրինաչափությանը:


- Ա. սուրճ      Բ. կողմ      Գ. ծառա      Դ. որդի      Ե. ոզնի

22. Ի՞նչ է գաղտնագրված նկարելուկով:



- Ա. անուշ      Բ. շուն      Գ. զանգ      Դ. աշուն      Ե. նուշ

23. Ո՞ր բառը կապ չունի տրված պատկերներից որևէ մեկի հետ:



- Ա. վզկապ      Բ. բալասան      Գ. թագավոր      Դ. մարջան      Ե. սեղան

24. **Կրիա, կուղբ, բուրգ, սարդ, բազե, ավազ, հորթ** բառաշարքը կազմված է հետաքրքիր օրինաչափությամբ: Ո՞ր բառն է դուրս մնացել այդ օրինաչափությունից:

- Ա. բուրգ      Բ. հորթ      Գ. բազե      Դ. կրիա      Ե. ավազ

25. Ի՞նչ է գաղտնագրված նկարելուկով:


**այբնուայբնուայբսեկենեչրե**

- Ա. անասնակեր      Բ. Աբրահամ, սա կեր:      Գ. անանաս կեր  
 Դ. այբբենարան      Ե. անանասասեր

26. Մարինեն **լկմակ, ենադրաս, ցաչբի, չինչա, կեղին** տառակապակցություններով բառեր էր կազմում: Ո՞ր տառակապակցությամբ չհաջողվեց բառ կազմել:

- Ա. լկմակ      Բ. չինչա      Գ. կեղին      Դ. ցաչբի      Ե. ենադրաս

27. Ո՞ր կենդանու նկարի տակ գրված տառն այդ կենդանունը չէ:



- Ա. արջ      Բ. ձի      Գ. կով      Դ. ոչխար      Ե. այծ

28. Երեխաները քննարկում էին, թե ինչ են երագում դառնալ: Մանվելը որոշել էր դառնալ մանկաբույժ, Երվանդը՝ երգահան, Հարեթը՝ հայագետ: Իսկ ի՞նչ էր ցանկանում դառնալ Վարդանը:

- Ա. նյարդաբան      Բ. վարակաբան      Գ. նկարիչ      Դ. վարսահարդար      Ե. ուսուցիչ